

ղեցաւ կռիւն մեր. կորուսաք զբաջ եւ զարի
 130 արս եւ զանթիւ մուտուլմանս: Իսկ նա իբրեւ
 զՓարաւոն քարացեալ եւ խստացեալ սրտիւ
 ոչ ճանճրացեալ ի չարէ եւ ի հեղլոյ արեան՝
 ասէ ցասմամբ. Անհնար է ինձ թոյլ տալ կամ
 յետս դառնալ, մինչեւ ոչ առից զերկիրն Լէ-
 135 հու եւ զթագաւորն կենդանի կալայց: Այլ
 զօրքն ամենայն ոչ կամէին զպատերազմս զայս
 ի սկզբանէ եւ այժմ եւս. եւ զի հարկիւ արար
 եւ զոռ, ոխ պահէին ի սրտի: Եւ մինչ Օս-
 մանն խորհէր այլ զօրս առաքել ի վերայ Լէ-
 140 հաց, եկն եհաս Զիկմունդ ի Լով իրեք աւուր
 ճանապարհ հեռի գոլով ի բանակէ որդոյն:

Իսկ ի բանակն Լէհցոց սաստիկ մահ ան-
 կաւ. որ եւ սով ընդ նմին. զի ոչ մնաց մարդ
 եւ ոչ անասուն եւ ոչ կերակուր. ուստէին զձիս
 145 եւ զայլ զարչելիս, նաեւ զմեռելոտիս:

Լուան մահմէտականքն եթէ գայ թագա-
 ւորն անթիւ զօրօք. անկանէին յոտս Օսմանոյ
 եւ ասէին. Թոյլ տուր կոլոյս եւ արա խաղա-
 ղութիւն. զի թէ որդոյն չկարացաք դէմ ունել,
 150 զիա՞րդ հօր նորա. քանզի ահա իրեք աւուր
 ճանապարհ է մենէ, որ գայ անթիւ եւ անհա-
 համար զօրօք, որ ծածկել են զերեսս երկրի եւ
 զբաշտս. եւ զի ազգն այն սաֆի երկաթ են եւ
 կրակ: Իսկ փքացեալ հպարտ դոռոզն որ սլա-
 155 ցեալ էր որպէս զարծիւ եւ գոչէր որպէս գա-
 ուրծ, իբրեւ լուան՝ կակղացաւ եւ իբրեւ